

ԱԿՈՒՄԲԻ ՆԻՍՏԵՐԸ ՈՐՊԵՍ
ԻՐԱՎԱԿԱՆ ՏԱՐԱԿԱՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐԹԱԿ

Իրավաբանական կրթության բարեփոխումների շրջանակներում ՀՀ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը *Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Հայաստանյան գրասենյակի հետ համատեղ* կազմակերպում են ակումբի նիստեր, որոնք իրավական տարակարծությունների քննարկման արդյունավետ հարթակ են Հայաստանի իրավական դաշտում առկա մի շարք օրենսդրական և գործնական խնդիրների լուծման համար: Ակումբի աշխատանքները համակարգում է ՀՀ փաստաբանների պալատի նախագահի՝ մարգարյին համակարգման գծով տեղակալ, խորհրդի անդամ Մելանյա Առուստամյանը:

2013-2014թթ. ընկած ժամանակահատվածում քննարկվել են ավելի քան 30 թեմաներ կամ խնդիրներ, որոնք վերաբերել են իրավական ակտերի նոր նախագծերին, փոփոխություններին, պետական մարմինների հետ փոխհարաբերություններին, օրենսդրական ոչ ճիշտ կարգավորումներին, փաստաբանների վարքագծի կանոններին, վերջիններիս իրավունքների խախտման դեպքերին և այլն:

Քննարկված բոլոր իրավական խնդիրները եղել են հրատապ լուծում պահանջող: Հիմնականում նման լուծումներ հաջողվել է գտնել քննարկումների ժամանակ ու վերացնել առաջացած խնդիրը: Օրինակ՝ 2013 թվականի ընթացքում ակումբում անցկացվել է երեք քննարկում քրեական դատավարության նախագծից, մասնավորապես հետևյալ թեմաներով՝ «ՀՀ Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը», «Դեպոնացման ինստիտուտը», «Ձերբակալման և մինչդատական կալանքի հիմքերն ու ժամկետները»: Արդյունքում ներկայացվել են առաջարկություններ:

2014 թվականի մարտ ամսին քննարկման դրվեց նաև «ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգը (պատժի ինստիտուտը)» թեման:

ՀՀ փաստաբանների պալատի կողմից ներկայացված առաջարկների և դիտողությունների արդյունքում Հայեցակարգից պալատի առաջարկությամբ հանվեց իրավաբանական անձանց պատասխանատվության ենթարկելու մասին կարգավորումը:

Նշենք, որ տեղի են ունեցել քրեական նոր օրենսգրքին վերաբերող ևս մի քանի թեմաներով քննարկումներ և դրանք արդյունքում փաստաբանների հայտնած դիրքորոշումներն ու առաջարկությունները ընդունվել են ի գիտություն նախագծի աշխատանքային խմբի կողմից :

2013 թվականի ամենաուշագրավ քննարկումներից մեկը վերաբերում էր «Կուտակային կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքով պարտադիր կուտակային կենսաթոշակի բաղադրիչի կիրառմանը:

Հազարավոր ՀՀ քաղաքացիներ իրենց դժգոհությունն ու սկզբունքային անհամաձայնությունն են հայտնել «Կուտակային կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքով պարտադիր կուտակային կենսաթոշակի բաղադրիչի կիրառման վերաբերյալ: ՀՀ փաստաբանների պալատը, համապատասխան դիմումի հիման վրա, ևս քննարկման առարկա դարձրեց «Կուտակային կենսաթոշակի մասին» ՀՀ օրենքով պարտադիր կուտակային կենսաթոշակի բաղադրիչի կիրառման վերաբերյալ հարցը և հանրությանը ներկայացրեց մասնագիտական կարծիք:

Ակումբների միջոցով դրական տեղաշարժեր արձանագրելու տեսանկյունից արդյունավետ էր ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից փաստաբաններին տեղեկատվություն չտրամադրելու մասին քննարկումը: Այն կազմակերպվեց փաստաբանների կողմից ֆեյսբուքյան «Փաստաբաններ» խմբում կատարված գրառումներում բարձրացված խնդիրների լուծման նպատակով: Արդյունքում, Պալատի նախագահը գրություն ուղղեց ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին և վերը նշված արգելքը վերացվեց:

Այնուհետև, բացասական դինամիկայով մի շարք պետական մարմիններ (ԱԱԾ, ՀՀ ոստիկանություն, ՊԵԿ, ՔԿԱԳ) սկսեցին նույնպես տեղեկատվություն չտրամադրել փաստաբաններին, ինչի կապակցությամբ ակումբում քննարկումներ տեղի ունեցան, որոշվեց նշված պետական մարմիններին տեղեկացնել ՀՀ փաստաբանների պալատի դիրքորոշման հետ և համատեղ միջոցներ ձեռնարկել առաջացած խնդիրները լուծելու համար:

2014 թվականին հասարակության մեջ մեծ հնչեղություն գտած մեկ այլ՝ «Վարչական տուգանքները՝ առանց դատական ակտի բռնագանձման» թեմայի քննարկման արդյունքում հնարավոր դարձավ կազմակերպել ավելի ընդլայնված քննարկում ՀՀ ԱԺ պատգամավորների, ՀՀ Նախագահի աշխատակազմի, ՀՀ Արդարադատության նախարարության, ՀՀ Դատական դեպարտամենտի, ՀՀ Վճարեկ դատարանի, ՀՀ Վարչական դատարանի, ՀՀ Ոստիկանության, Երևանի քաղաքապետարանի, հասարակական կազմակերպությունների և Կապի ծառայության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Բացի վերը նշված թեմաներից, քննարկվել են՝ բարոյական վնասի փոխհատուցման, անչափահասների մասնակցությամբ քաղաքացիական գործերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարան ուղարկվող դատավորների թեկնածուների ընտրությանը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին մասնակից դարձնելու, երդվյալ ատենակալների ինստիտուտների անհրաժեշտությունը, դատական նիստերի դահլիճում վարքագծի կանոնները, փաստաբանների իրավունքների խախտման դեպքերը և այլն:

Ընդգծելով ակումբի կարևորությունը, հարկ է նշել, որ տեղի ունեցած քննարկումներից մի քանիսը համարվել են նաև փաստաբանների

վերապատրաստման դասընթացներ, որոնք պարտադիր բնույթ են կրում և ծառայում են փաստաբանների մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները կատարելագործելու նպատակին:

Մարինե Ֆարմանյան

*ՀՀ փաստաբանների պալատի
երիտասարդական խորհուրդ*